առաջի կայր նմա. գնաց եհաս մօտ մեղմիկ օդով՝ և արձակեաց թնդանօթ մի զկնի. և նա ոչինչ համարեցաւ և գնայր զճանապարհ իւր. սա երկրորդեաց և երեքկնեաց զայն, և նա ոչ ինչ հոգացաւ զայնմանէ. սա աստուստ կատաղեցաւ և զայրացաւ, և վարէր զնաւն սաստկութեամբ ի վերայ. իսկ նա անապարեաց անդէն, պարզեաց զամենայն առագաստսն, և թևօքն առագաստից և թիանց վարութեամբ տեղի տայր։ Մոսկոֆեանք զայն տեսեալ՝ մակոյկսն վազեցին ի վերայ. մօտեցաւ մակոյկն ի Վ.օլիկն և սկսան մարտ պատերազմի. քաջացան երկոքին կողմանքն և մարտեան թիւֆէնկով և փիշտոֆով. և տեղի ետ հիւսիսականն. դարձան ընդ կրունկն մոսկոֆեանն ի նաւն. և անտի դարձեալ սկսան մարտ պատերազմի թօփով յերկուց կողմանց, և երկարեցաւ մարտն իբր երեսուն ժամս. և որպէս թուի անկան բազումք ի հիւսիսայնոյն քան ի միւսմէն. իսկ Վ.օլիկն մերձեցաւ ի ցամաք անդր, և թիկունս եդիտ, և անտի սկսան և արտաքուստ արձակել թօփս և թիւֆէնկս. և գիշերն եհաս ի վերայ. իսկ հիւսիսայինն տկարացեալ այլ ևս՝ ունայն դարձաւ յետս. իսկ նա ազատեալ ի ձեռաց նորա՝ գնաց զճանապարհ իւր՝ ի սքանչացումն մեր ամենեցուն, որք ի զննին կայաք, զի չէր այնքան հեռի ի մէնջ. այլ որպէս սուրբ զազարու վանքն և սան սէռվլօն։

Լուսանցքին եզերքը հորիզոնաձև գրուած կայ նաև հետևեալը, առանց նշանի մը՝ թէ ո՛ւր պէտք է մտնել։

Այլ սոքա չէին բուն մոսկոֆք, այլ յոյնք մոսկոֆեան պայրախով և նոցա հպատակք։

Գրեցաւ յամի 1771 ի դեկտ. 8

ՅԴ.

Գ.

Գերյարգելի Հոգևոր հօր իմում, և մեծապատիւ Աբբայի
Տեառն Տեառն Ստեփաննոս Վրդպ.ի մեծաւ խոնարհութեամբ ողջոյն սիրոյ

... Վասն պատերազմաց յայտ լիցի. զի ստուգիւ լուաք, թէ երկու ամսով յառաջ՝ եհար մօսկոֆն զտաճիկն առ բուգուրեշտ քաղաքաւն չարաչար իբրև զհարիւր հազար. ցիր և ցան արար. և գերեցոյց հանդերձ փաշայիւն բազումս. և զպատերազմական անօթս յոլովս գրաւեաց, և զկէս մի հալածական արար զդանոբաւ. և առանձինն զ24 առապայ լի առասանօք և խայիշիւք էառ ի տաճկէն։ Ապա հարցանելով մօսկոֆն ցփաշայն, թէ առ ի՞նչ բերեալ իցէ զայնչափ առասանս և խայիշս։ Պատասխանելով ասէ ստուգութեամբ, թէ առ ի գերել և կապել զմօսկն։ Վասն զի չունէր այժմ ի մտի ընդհարկանիլ ի կռիւ անպատրաստ գոլով։ Սակայն խաբեալ յիմոց պօյերից անկայ ի ձեռս թագաւորին զօրօքս, որոյ կամ առաջի։ Ցայնժամ հրամայեաց մօսկոֆն նոքիմբք առասանօք կապել և տանել զնոսա գերիս աւելի քան զժ. հազար տաճիկս. և միշտ լսի, թէ մօսկն հարկանէ և վանէ չարաչար զթուրքն։... Նոր տէկոէթ եկն ի սրբազան պապէն ընդ ամենայն երկիրն թագուհւոյն, որով լուծանին և տնօրինին ամենայն տօնք ընդ բոլոր տարին, բաց ի կիւրակէից և ի տէրունականաց, զոր և ի մեր եկեղեցին հրատարակեցաք[1]։...

Անպիտան ծառայ
Հայր Բարսեղ Դասդուրեան
ի կարգէ սրբոյն Անտ. վրդպ. Մխիթարեան

1772 Յունվրի. 8
Յերիսաբեթուպոլիս

1. Այս «Նոր տէկոէթ»ը որ — ըստ Նամակագրին — Սրբազան Պապէն է՝ կու գայ կերպով մը հաստատելու Աւստրիոյ կայսեր հրովարտակը և միանգամայն արգիլելու այդ առթիւ յարուցուած վէճերն ու դիմադրութիւնները (տես ՅԱ. վաւերաթուղթ, էջ 270)։